


ՏՈԿՈՍԻ ՄԱՍԻՆ

Անօրէն եւ չար մոլութեան տէր մարդր, փոխանակ տոկոսներէն երկիր- դաժուրեամբ հեռանալու, մեծ ցանկութեամբ կը մտերմանայ տոկոսներու շահին հետ, որը կը ցրուէ իր ուշադրութիւնը, որպէսզի արհամարհէ Աստուծոյ պատուիրանը, կը շփոթեցնէ սիրտը, որպէսզի ահեղ դատաստանի օրը չյիշէ: Միտքը այնպէս մը կը բարացնէ, որ չգթայ իր եղբօրը հեծեծանքին վրայ, կը փակէ ականջներն ու աչքերը ու զինք դիտողներու արհամարհանքէն չամչնար, այլ՝ թշուառ հոգիին համար համարձակ կերպով յաւիտենական հուր կը հաւաքէ եւ կը դիզէ: Եւ ինչպէս որ երկրագործները կ'աղօթեն եւ կ'աղերսեն Աստուծոյ, որպէսզի անձրեւ տեղայ ցանուած սերմերուն վրայ, նոյնպէս ալ վաշխառուն, աղփատութիւն, նեղութիւն եւ սով կը ցանկայ բոլորին, որպէսզի տրուած դրամի տոկոսին փոխարէն, մարդոց ստացւածքներուն տիրանայ: Դրամը փոխտուած ժամանակ գուարթերես է, իսկ երբ տոկոսի պայմանաժամը հասնի եւ նկատէ պարտապանին աղփատութիւնն ու շփոթանքը, անգուր կը դառնայ, աղաչողին երդումին չի հաւատար ու նեղութեան մէջ գտնուողին աղերսանքին երբեք զիջում չի կատարեր, այլ՝ կը դառնայ անողոք ու անզիջող եւ պարտապանը կը նկատէ որպէս իր ծառան: Կը ինքնէ, գիտնալու համար, թէ [պարտապանը] ինչ ինչքեր ունի, որոնք կրնան իրը ըլլալ: Կը հետագօտէ, թէ ուր տարած եւ պահած է գանձնէ: Բազմութեան մէջ կը նախատէ, սիրելիներուն մօտ կ'ամչցնէ եւ հանրութեան մէջ կը չարչարէ:

(Ճանեռ Յովնան Մանուանուն)

ՍՐԲԱՆՈՅՍ ՄԻՐՈՆԸ



Միւռնուած Մանուկը

Երբ հայ մանուկին ականջները կը միւռնուին, անոնք Քրիստոսի հովուական սրինգին քաղցրահունչ ձայնը լսելու զգայնութեամբ կը թրծուին եւ Սուրբ Հոգիին ձայնը աշխարհի ձայնէն զանազանելու պարգեւով կը յատկանշուին:

Երբ հայ մանուկին քիթը կը միւռնուի, անիկա Քրիստոսի անձառելի սիրոյն ու գուարճացուցիչ քաղցրութեան բոյրը հոտոտելու զօրութիւնը կը զգենու եւ կը սկսի Կենդանաբարին ներկայութիւնը փնտռել:

Երբ հայ մանուկին բերանը կը միւռնուի, անիկա Քրիստոսի փառքը պատմելու եւ Քրիստոսի փրկութեան համար վկայելու առատահոտ աղբիւրի կը վերածուի:

Երբ հայ մանուկին ձեռքերը կը միւռնուին, անոնք կը դառնան մշտագործ ու բարեգործ ձեռքը Յիսուսի եւ մշտաշարժ ու քաղցրաշարժ ձեռքը անշարժ Աստուծոյ՝ դէպի աղբատը շարժող:

Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿՈՐԱԿԻ, 31 ՅՈՒՆԻՍ 2022

ԹԻՒ 31

ԿՈՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 3.16-4.1: Ա. Կր. 1.25-30: Մտ. 18.10-14

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 18.10-14

ԿՈՐՍՈՒԱԾ ՈՉԽԱՐԻՆ ԱՌԱԿԸ

Ձգո՛ւ՛, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն ոեւէ մէկը: Գիտցէ՛ք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս, որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

Ի՞նչ կը կարծէք, եթէ մարդ մը իր հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը ոչխարները լերան վրայ եւ չերթա՞ր փնտռելու կորսուած ոչխարը: Այո, կ'երթայ: Եւ եթէ պատահի, որ գտնէ վստահ եղէ՛ք, որ ատելի կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննսունինը ոչխարներուն համար, որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է չ'ուզեր, որ այս փոքրիկներէն մէկը կորսուի:

Գառնուկը գայլերուն ձեռքին մէջ՝ ինծի՛ համար

Ես խաչին վրայ ձեռքերդ տարածեցի կարծելով, որ բեզ սպաննեցի, իսկ դուն տարածուած ձեռքերովդ զիս ընդունեցիր գիրկիդ մէջ: Ես գաւազանով գլուխիդ զարկի, իսկ դուն՝ պահապանը գլուխիս, օրհնութիւններ թափեցիր գլուխիս վրայ: Ինծի համար խաչին տակ կ'եցար, որպէսզի մեղքի տակ կ'աժա՛ստ օտքի կանգնիմ: Ինծի համար խաչին վրայ գլուխդ խոնարհեցուցիր եւ ինծի նայեցար հաշտութի՛ւն խնդրելով, իսկ ես երեսդ ի վեր պոռացի՛ խաչէն վար իջի՛ր եթէ երբեք Աստուծոյ Որդին ես: Ինծի համար Գառնուկը գայլերուն ձեռքին մէջ ինկար, որպէսզի Չարին ձեռքին մէջ ինկածս՝ փոխադրես երկնաւոր Հօր ձեռքին մէջ: Շնորհակալ եմ, Տէ՛ր Յիսուս, այդ փոխադրութեան համար:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՏՕՆ ԹԱԳԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ՍԱՆԳՈՒԽՏ ԿՈՅՍԻ



Դուստրը՝ Սանատրուկ թագաւորին, որ աշակերտելով Թադէոս առաքեալին, իր հօրմէն գաղտնի ընդունած էր քրիստոնէութիւնը: Սանատրուկ, գայրանալով այս եղելութեան վրայ, հայրական ամէն ողորհչ միջոցներ ի գուր գործադրել վերջ, անդրդուելի գտնելով իր աղջկան հաւատքը, հրամայեց անոր մահը: Արքայազն օրիորդը, որ իր սեռին պատկանող շատերու ալ դարձին այսինքն՝ հոգւոց փրկութեան պատնառ եղած էր արդէն Հայաստանի մէջ, իբրեւ առաջին առաքելուհի Հայոց, եղաւ նաեւ առաջին վկայուհի, իր կուրծքէն ընդունելով նահատակող հարուածը: Ս. Թադէոս թաղեց անոր մարմինը թափուն տեղ մը: Քանի մը օր վերջ ինք եւս նահատակուեցաւ գլխատութեամբ՝ Սանատրուկի հրամանով: Երեք դարեր անյայտ մնաց անոնց գերեզմանները, մինչեւ Լուսաւորիչի եւ թերեւս նոյնիսկ Թարգմանչաց օրը: Թէեւ այս մասին յիշատակութիւն կայ Մովսէս Խորենացիի պատմութեան մէջ, բայց աւելի նոյն կերպով նկարագրուած է ան ժամանակակիցէ մը, եւ անկէ անցած Յայսմաւորէի մէջ:

Կիրակոս անուն միայնակեաց մը, որ կը բնակէր Թադէոսի եւ Սանդուխտի նահատակութեան վայրին մօտ՝ Սանատրուկ կոչուած լեռ մը, Արտագ գաւառի Շաւարշան դաշտէն ոչ հեռու, տեսիլքի մը մէջ տեսաւ ոսկի լուսաշող աթոռի վրայ բազմած մէկը, որ իր շուրջը ունէր հինգ մարդիկ, յետոյ բլուրին վրայ երեւցաւ արեւու պէս պայծառ ոսկեհուն գգեստներ հագած թագաւորացն աղջիկ մը, որ գլխուն վրայ հրաշագեղ պսակ մը՝ եկաւ աթոռին առջեւ: Յետոյ սփանչելի կերպարանքով մարդ մը յայտնեց միայնակեացին, թէ լոյսը՝ Ս. Հոգւոյն շնորհքն է, աթոռին վրայինը՝ Թադէոս առաքեալն է, աղջիկը՝ Սանդուխտ կոյսն է, իսկ աթոռին շուրջինները՝ առաքեալին աշակերտներն են: Երկու օր վերջ, երկրորդ տեսիլքի մը մէջ առաքեալը, կոյսը եւ միւսները միայնակեացին կը մատնանշէին իրենց գերեզմանները: Այսպիսով գերեզմանները փորուելով բացուեցան եւ գտնուեցան նշխարները, որոնց շուրջը խոնրեցաւ ժողովուրդին երկիւղածութիւնը:

ԻՆՉ ՁԵՒՈՎ ԿՐՆԱՄ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Նախ՝ ողորմած ու գթած պէտք է ըլլաս եւ երբ խեղճ աղքատները տեսնես, պիտի փորձես կարելիութեանդ սահմանին մէջ անոնց օգնել, որպէսզի արժանի ըլլաս Քրիստոսի երանութեան. «Երանի՛ր ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծո՛վ ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթէոս 5.7): Երկրորդ՝ պահեցողութիւն պիտի ընես:

Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՏ ԳԱՍ

ՈՐՊԷՍՅԻ ԱՍՏՈՒՂԾ ԻՐ ԲԱԺԻՆԸ ԸՆԷ՝ ՄԵՆՔ ԱՆ ՄԵՐ ԲԱԺԻՆԸ ՊԷՏՔ Է ԸՆՆԵՆՔ

«Յիսուս սպասաւորներուն պատկիւրեց, որ կարասները ջուրով լեցնեն, եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան» (Յհ. 2.7): Ինչո՞ւ Յիսուս պատկիւրեց սպասաւորներուն, որ կարասները ջուրով լեցնեն: Ինք չէ՞ր կրնար լեցնել զանոնք: Ինք՝ որ կարող է ջուրը գինիի վերածել, ինք՝ որ կարող է երկինքէն անձրեւ տեղացնել կամ երկրի ընդերքէն ջուր դուրս բերել, չէ՞ր կրնար հրաման մը տալ եւ կարասները ինքնաբերաբար ջուրով լեցուէին: Վստահաբար կրնար: Բայց չըրաւ: Չըրաւ, որպէսզի տրվեցնէ մեզի, թէ մենք մեր բաժինը ունինք ընելիք եւ ինք՝ իր բաժինը: Մեր բաժինը կարասները ջուրով լեցնելն է, իսկ իր բաժինը՝ ջուրով լեցումը կարասները գինիի վերածելն է:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Աստուած չի գործեր մեր կեանքին մէջ, եթէ զինք առանձին ձգենք իր գործին մէջ: Աստուած կ'ուզէ, որ իրեն հետ միասին գործենք: Մենք մեր բաժինը պէտք է ընենք, եթէ կ'ուզենք որ Աստուած իր բաժինը ընէ:

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԱՍՏՈՒՂՈՅ ԵԿԵՂԵՅԻՐՆ ՄԱՍԻՆ ԿԸ ԽՈՐՀԻՍ, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 45

Միտքս գեղեցիկ մտածումներով կ'եռայ, լեզուս արագագիր քարտուղարի մը գրիչին պէս կը սահի՝ այս տողերը ընծայելու համար թագաւորին: Գեղեցկութեամբ գերազանց ես բոլոր մարդոց մէջ: Շնորհք կը կաթի շրթներդ. իրաւամբ Աստուած քեզ օրհներ է յախտեան: Կապէ՛ սուրը մէջքիդ, ո՛վ դուն հզօր, նշանակը քու մեծ փառքիդ ու վայելչութեանդ: Լարե՛ յաջորդութեանդ աղեղը, հեծիր կառքդ՝ պաշտպանելու համար ճշմարտութիւնը, հեզութիւնն ու արդարութիւնը, եւ թող աջդ սքանչելի յաղթանակներ ապահովէ: Սրուած նետդ հզօր թագաւոր, թշնամիներուդ սիրտը թող խրուի, ժողովուրդները ուրքերուդ իյնան: Քու աթոռդ, ո՛վ Աստուած, յախտեանական է, թագաւորական իշխանութիւնդ արդար իշխանութիւն է: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչո՞ւ Աստուած, քու Աստուածդ, ուրախութեան իւղով օծեց քեզ, բոլոր թագաւորներէն վեր կարգելով: Չմոռս, հալուէ եւ կասիա կը բուրեն գգեստներդ, լարաւոր նուագարանները քեզ կ'ուրախացնեն փղոսկրազարդ պալատիդ մէջ:

Միշտ աղօթենք առանց վիատելու բանալով եւ կարդալով Սաղմոսագիրքը